

ՄԷՃՄՈՒՄԻ ԱԽՊԱՐ

DIRECTION DU JOURNAL
MEDJMOUA - I - AHBAR
Grand'Rue de Pera, Taksim 65

Համբարսալ իրի տեճա ետեմի ՉԱՐՇԷՆՊԻՀ ղե ճՈՒՄԱՍ ԻՐԹԷՍԻ
կիւնըերի ձեշո օրուհուր:

مجموعة اخبار

بك اوغلى تقسيم جادى نومرو 70

ՂԱԶԷԹԱՄԸԶԸՆ ԱՊՕՆԷ ՅԻՅԱԹԼԱՐԸ. = Իրիսանայոյ իւրին սէնէլիկի 60 ղրուշ, = 6 այլըղը 35. = Թարաւ իւրին սէնէլիկի 85. = 6 այլըղը 45 ղշ. տուր: = Բօսթա իւնըթի պիզէ ալիս տիր: = 15 կիւնըիւք նիւսիսէ 60 բարա տըր: = ԻՒՆԱՍԹ ՇԱՐԹԼԱՐԸ. = 1ինճի սաշիֆէնին պէնէր սըրասը 5, 2ինճի վէ 3ինճի սաշիֆէնին պէնէր սըրասը 3, վէ կիւնըիւ սաշիֆէնին պէնէր սըրասը 1 ղրուշ տուր: = 2օգ տէֆա տէրճ խիլէնէք իւնայթ իւրին այլընա բազարըդ օլուհուր: = Նիւսիսէսի 30 բր տըր:

Ղազէթահա միւթէալիք խուսուսաթ իւրին ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՕԼԱՅԵԱՆա միւրաճաաթ օլուհուր: = Իտարէխանէ՝ Պէյօղլուհա ճատտէի քէպիլու: Ն. 65:

ՄԵՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՅԸ

Եթէ մարդկային կեանքին անխուսափելի տառապանքներն սփոփելու, լիշտերն ամոքելու, նեղութիւններն մխիթարելու, կարօտութիւններն լրացնելու համար մարդասիրական կարեկցութիւնք, սոստաձեռն օժանդակութիւնք և նիւթական օգնութիւնք՝ ազնիւ սիրտերու սեփական բարեգործութիւններ ըլլալով, այսպիսի վսեմ և օգտաշատ զգացմամբ տոգորուած պատուական անձինք Աստուծոյ օրհնութեան և մարդկանց երախտաբարութեան միշտ արժանի են, հապա որչափ եւս առաւել Հիւանդանոցի մը պէս բարեգործական հաստատութեանց ամենակարեւորն և ամենէն օգտակարն եղող անկախութեան տանն և է կերպով ստարակներն առաջնութեանց մեծագործներէն մինն և բարեգործութեանց գրեթէ լրումն ըլլալու է:

Օրհնութեամբ և բլբլ օրհնութեամբ թող ուրեմն յիշուին հանապազ, այն անհուգական բարեբարներու շքնաղ յիշատակն որ հիւանդանոցի և անկեղանոցի մը նման անհրաժեշտ հարկաւոր եղող հաստատութեան մը կարեւորութիւնն զգացած և իրականութեան հասցեցած են, և մեզի պէս փոքրիկ Կաթողիկէայ Հայ հասարակութիւնն, Սրբոյն Յակոբայ անուան նուիրուած հիւանդանոցով մը օժտած և ճոխացուցած են:

Բայց որովհետեւ ու է ձեռնարկ կամ գործ՝ սկսած օրէն կարելի չըլլալով մէկէն ի մէկ կատարեալ վիճակի հասցնել, ժամանակաց հոլովմամբ և մշտապէս ջանքերու և եռանդանոցի աշխատութեանց շնորհիւ հետզհետէ բարեկարգ ճամբու վրայ կը գործին, ահա այսպէս ալ Ս. Յակոբայ Անկեղանոցը, այսօր ժրջանի և անձնուէր հոգաբարձուներու և ճոխասիրտ բարեբարներու շնորհիւ սոյն խորհրդագ ճամբու վրայ դրուած օր ըստ օրէ յառաջադէմ զարգանալու վրայ է:

Այս գիտութեան յարկին վարդութիւնն ստանձնած արդի պատուարժան և անձնուէր անձանց նկատմամբ գովեստներ չընող չէ աստ նկատում, և միթէ անոնց օգտակար գործունէութեանց արգասիքներէն յառաջ եկած արդիւնքներն ամենէն գովեստներն, ամենէն գոհունակութիւնն և ամենէն երախտագէտ շնորհակալութիւններն իրենց չեն գրաւեր, և եթէ իրենց աշխոյժ և եռանդին համաշափ մեր ժողովրդեան կողմանէ ալ նիւթական և բարոյական օգնութիւններ և խորխոյսներ տեսնէին, արդեօք ո՛րչափ աւելի պիտի զարգացնէին տակաւին յետին կարօտեղոյ այս նուիրական ապաստանարանն:

Բայց վերին խախտանքներն միշտ կը սկսէ, ինչպէս բոլոր մարդկանց, նոյնպէս մարդկութեան այս տառապանքներուն վրայ ալ, մասնաւոր հոգածութեամբ մը. և ահա այս վերջին օրերս անոր ուրիշ մէկ ապացոյցն տեսնուեցաւ:

Ինչպէս Պատ. Մէճմուաի Անպարի մէջ ծանուցուեցաւ, Կ. Պօլսոյ Անարատ Յղուութեան Կուսատանէն մի քանի մայրապետ

ներ, սնուշտ երկնային աղբւմամբ ներշնչեալ, կամովին և անձնուիրաբար իրենք զիրենք հիւանդաց ծառայելու պաշտօնին նուիրելու ազնիւ գաղափարն կը յղանան և մէկ երկուքն ալ զայն կ'իրագործեն, իրենց ընկերակիցներէն աւելի հաստատամիտ և աւելի քաջ գտնուելով:

Հիւանդանոցի մը պէս ապաստանարանի մը մէջ ասանկ անձուէր, զթաճ և եռանդանոց պաշտօնեայններուն հարկն անհրաժեշտ է, որպէս զի իւր նպատակին աւելն անհակտով կարենայ հասնիլ. և միթէ՞ ցարդ փափաքուած կատարելութեան չկարենալ հասնելուն հարկն անհրաժեշտ է, այսպիսի անձուէր անձանց պակասութիւնն չէ՞ր: Բայց փառք Ամենակալին, որ մեր Բարեխնամ Օգոստոսիան Կայսեր Ապուլու Համիտ խանի փառապանք թաղաւորութեան օրով, տա՛ն հիւանդանոցին այս պակասութեան լրումն ալ սկիզբ կ'ընէ:

Թէպէտ և յիշեալ մայրապետաց կէտ նըպատակն եղող աղջկանց դաստիարակութեան և բարեկրթութեան դերն ալ ամենագոյնի և ամենաբարձր քաջալերութեան արժանի բան մըն է. և այս նպատակին լրումն հասնելու համար տակաւին պէտք եղած բարեխոսութեաններուն տեղի ունենալն ալ յոյժ և յոյժ փափաքելի է, բայց անոնց համար որ հիւանդներու ծառայելու փափաքն կ'զգան, թէ և քիչ մը տաժանելի բայց կարի յոյժ մխիթարիլ այս պաշտօնի կոչուած ըլլալին գիտնալով հանդերձ, թերեւս ինչ ինչ մարդկային նկատումներու, ջնջին երեւակայութիւններու, անտոյ պարծանքներու համար այսպիսի վսեմ զգացումներուն խուլ կը մնան, և զայն մարդու կը ջանան, այս ալ գովելի գործ մը չըլլալն դատ, այսպիսիք իրենց այս կոչման ալ դէմ դրած ըլլալ կրնան համարել:

Կայ միթէ աւելի բարձր առաքինութիւն մը, քան զինքն զոհել անտաժաններու դարմանութիւն, հիւանդներու ծառայութեան, անկարներու օգնութեան. ինչ է աւելի դիւցազնական ողորմածութիւն, եղբայրսիրութիւն, քան անձուէր գոհողութեամբ խեղճ թշուառներուն անարին լոկ հսկել գիշեր ցորեկ, անոնց ցաւերուն մասնակցել, տրտմութիւններն փառատելու, նեղութիւններն սփոփելու, սըրտերն զուարթացնելու և առողջութիւնն ինն վերստացնելու անգուլ անդադար ճգնիլ, աշխատիլ:

Ասանկ գոհողութեան մը վարձքն ո՛չ ապաքէն բերապատիկ աւելի պիտի ըլլայ, քան ու է բարեգործական գործ:

Մի՛ խուլ ըլլա՛ք ուրեմն ձեր աղքատ ջրղիւրուն տկար բայց սրտաշարժ ձայնին, որ կարծես իրենց ցաւոց անկողնոյն մէջէն մարած աչքերնին դէպ ի ձեզ յարած, բարախուն սրտով և կարօտակէզ փափաքով ձեզ օգնութեան կը կանչեն: Դուք որ այս բարձր պաշտօնին ներքին հակում մը կ'զգաք, մէկը թողլով ու է ակնածութիւն, խորհրդածութիւն և նկատումնք դիմեցէ՛ք դէպ ի զթութեան այս յարկն. գիտցած եղէ՛ք որ ձեր հոն ոտք կոխելովն,

նոյն տեղն կրկին պիտի օրհնուի. ձեր օրինակն բարեբարներու սիրտերն աւելի պիտի շարժէ և իրենց կարողութեան համեմատ նպաստներն աւելի պիտի բազմապատկէ. ողորմութեան ամենաբարձր արժանի այս տան ցարդ փակ մնացած դանձերն պիտի բացուին, ձոյն նուիրատուութիւնք պիտի գան, թէ ասկից և թէ դաւաճութիւն օգնութիւններ չպիտի պակսին, մասնաւոր այն գաւառներէն որոնց հիւանդներն Հիւանդանոցին մեծ մասը գրաւած են:

Իսկ արդի յարգոյ պաշտօնատեսքը, աւելի խրախուսուած և աւելի քաջալերուած բարոյական և նիւթական այս նըպատներէն, անանկ անձանքոյթ աշխուժի պիտի շարունակեն իրենց այս նուիրական պաշտօնն որ շատ չանցած փափաքուած մակարդակին պիտի բարձրանայ մեր Հիւանդանոցը:

ՅՈՎԱՆՓ Վ. ԲՈՂԱԹԵԱՆ

ՀՈԳԻԻ ԽՍՍԲԵՐ

ՆԱՄԱԿ ԶՈՐՐՈԴ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ԱՌ ՎԱԿԱՍ

Ի Թօփալի

La vérité est venue, que le mensonge disparaisse.

Սիրելի, բայց արգահատելի բարեկամս,

Թօփալիին թօփալ (կաղ) նամակդ, հիւանդոտ գրութիւնդ առի, ջերմոտ տողերդ մեծ տրորութեամբ, խորաթափանց յուզումով կարդացի, և իբրեւ բարեկամ՝ անհո՛ւն և անզուսպ ցաւ մ'զգացի. ո՛հ, խեղճ տղայ, հիւանդ է ըսի, վարակուած է աւա՛ղ, ե՛րբ և ի՛նչպէս չգիտեմ...:

Ըսէ՛ք խնդրեմ, ըսէ՛ք կ'աղաչեմ, ըսէ՛ք մի քաջութեք, դուք միշտակ չէք, այլ Ձեզ հետ, Ձեզ պէս աւա՛ղ շատեր, այն լուսաւորեալ երկիրներէ դաւոցող, համալսարան տեսող, փիլիսոփայի հովեր առնող, կարգ մը՝ թերուս շրջանաւարտներ, շատ քիչ բացառութեամբ, որք վարակուած են այդ «ախտէն» ու «աղտէն», այնքին՝ Ձեր ունեցած հիւանդութիւնէն...: Տխուր է ըսիլ, թէ հոս ալ կան, հոս ալ եկած են, հոս ալ մուտ գտած են այդ «միբրոպի»ներէն որ համաճարակի միբրոպիներէն շատ աւելի ահարկու են, վարակիչ միբրոպիներ՝ որ մարմնոյ հետ շատ գործ չունին, թոքերու, աղիքներու չեն մօտենար, այլ ուղղակի գլխուն մէջ կը մտնան և ոչխարի «տոլթ» պէս ուղղին կը փակչին. նախ կը քերեն, հը գրգռեն և ապա կը խայթեն, կը ծակեն, կը ծակծըկեն, կը ծծեն, կը քամեն, և վերջապէս կը փճացնեն, կ'ոչնչացնեն:

Նամակնուդ պատասխան և ի բժշկութիւն Ձեր վստահաւոր և տարախոյնիկ հիւանդութեան գիրք մը սկսած եմ, կը գրեմ, զոր պիտի տեսնաք և կարդաք, որոյ մէջ պիտի գտնաք այդ կարգի հիւանդութեանց ամէն տեսակներն, անոնց ծագումը, պատճառը, յառաջանալը, տարածուելը, և անոնց ճարը, դեղը և դարմանը. վստահ եմ կատարելապէս թէ ա-

մէն անոնք՝ որ այդ իմ լուրջ աշխատութիւն աչքէ անցունելու առիթ պիտի ունենան, այդ ախտի դէմ յաջողութեամբ մաքաւիլ պիտի կարենան:

Հիւժախտի բուժման համար ինչե՛ր չըրին և ինչե՛ր չեն ըներ. վերջերս մինչեւ թոքերու մէջէն ելեկտրական հոսանք անցնելով, հոն բոյն դրած, հոն բոյն շինած մանրէներու հաւաքոյթը փճացնելու համար, թէեւ օգուտ մը չունեցաւ, բայց խնդիրը հոտ չէ, այլ երբ մարմնոյն այդքան հոգ կը տարուի, երբ մարմնոյն այդքան հարքներ կը բանեցուի, հոգեոյն թշնամոյն դէմ ինչո՞ւ պատուար մը չը քաշուի՝ «չէ՛ որ հոգի առաւել է քան զմարմն»...» Ապաքիճարաններ պէտք է անաւարտները բուժելու, ՀԱԿԱՆԵՆՈՒԻԼ կ'ուզեն անոնք. պէտք է իմաստուն դըլուխներ, ներհոն և բեղուն գրիչներ, կարող քարոզիչներ, բեմախօսներ միանան, ձեռք ձեռք տան, կէտ նպատակ ունենալով միայն «մաքաւիլ» ընդդէմ անաստուածութեան...:

Գիտական խորութեանց մէջ մանելու ճառելու համար գրքեր, հատորներ պէտք է, նամակով մը ինչ կարելի է ըսել, որքան ալ որ երկար լինի. բայց առ այժմ Ձեզ անպատասխան չի ողլու, մեր թըղթակցութեան թելը չկարելու և Ձեզ գոհացում տալու համար, բանաստեղծ և բանաստեղծութիւնը՝ ինչպէս կ'ըսէք մէկգի դնելով, գիտական աշխարհի ամենէն մեծ հսկայներէն դէթ մի քանին մէջտեղ բերելով պիտի խօսեցնեմ, մտիկ ըրէք ուրեմն սիրելի, հիւանդոտ բարեկամս:

Յառաջադիւթիւնը՝ գիտութեամբ «Le progrès par la Science» այնպէս չէ՛. գիտութիւնը հոգիէն, և հոգին գիտութիւնն պէտք չէ բաժնիլ:

Լորտ Պէյքըն՝ որ արդի գիտութեանց հեղինակն կը համարուի, կարգ մը թղթակներու, «հանճարի կապիկներու խօսքը ուղղելով կ'ըսէ՝ «Ստեղծուած հոգի մը անկարող, և խիստ տկար է ընդգրկելու և հասկնալու այն երիցս՝ Ս. Աստուծոյն ձեռագործները, որոնք անհունապէս մեծ, և զանոնք հասկնալու, մեկնելու լրացատրելու, թուելու համար պէտք է ըլլալ իրեն պէս»:

Դարուս այն ամենամեծ գիտունը և ամենամեծ հաւատացեալը տիեզերահոլ չակն Բաթէճօն՝ տաճարին ուշաքարին ծոնը իջած, յայտնութեան արեւոյն պայծառ լուսնն շլացած, կը կանչէ. մարդուս խելքէն, մտքէն վեր ճըլմարտութիւններ պէտք չէ քննել: Օր մը՝ իր գիտական աշակերտներէն մի քանին ըսած են իրեն. «Սիրելի վարպետ, Մեծահոն Տէր, քեզ համար կ'ըսեն թէ այդ մարդը, այդ մեծ գիտնականը որ այնքան խորած և այնքան ուսում ըրած է, ինչպէս կրնայ հաւատալ»... և Բաթէճօն պատասխանած է. «C'est pour avoir réfléchi et étudié beaucoup que j'ai gardé une foi de Breton». (Revue des Questions Scientifiques 1896 տես երես 387.) «Շատ խորհած, և շատ ուսում ըրած ըլլալու համար է, որ Պարզեմի մը հաւատքն ունիմ»:

(Շարունակելի)

